ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆԸ ՀԱՅԱՁԳԻ ԲԱՐԵՐԱՐԻՆ

Հունիսի 3-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելեց հայազգի երախտաշատ բարերար Լևոն Հայրապետյանը՝ հայտնի գրող-հապարակախոս, հասարակական գործիչ Զորի Բալայանի և Արցախի թեմի հոգևոր առաջնորդ Գարգև Արքեպիսկոպոս Մարտիրոսյանի ուղեկցությամբ: Վեհարանի իր աշխատասենյակում հարգարժան հյուրերին ընդունեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Տեղի ունեցած քերմ զրույցի ընթացքում Նորին Սրբությունն իր գնահատանքը և հայրական սերն արտահայտեց հայազգի բարերարին՝ Հայաստանին, Արցախին, հայ ժողովրդին, Հայ Առաքելական Եկեղեցուն և Արցախի թեմին նրա նվիրվածության, մատուցած բազում հայրենանվեր ու ազգանվեր ծառայությունների համար, որոնց թվում հատկապես գնահատանքի է արժանի նրա օժանդակությունը Գանձասարի պատմական վանքի վերանորոգման աշխատանքներին: Այնուհետև Նորին Սրբությունը Հայրապետական Կոնդակի ընթերցումից հետո պարոն Հայրապետյանին պարգևատրեց Մայր Աթոռի բարձրագույն՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով (տե՛ս էջ 130):

Պարոն Հայրապետյանը, իր երախտագիտությունը հայտնելով, նշեց, որ ինքը հետագայում ևս նույն ոգով շարունակելու է բարեգործությունը և ամեն կերպ նպաստելու իր հայրենիքի ծաղկմանը և վերաշինությանը:

«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆ ԱԶԳԱՆՎԵՐ ՀԱՅՈՐԴՈՒՆ

Հունիսի 7-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելեցին Շվեյցարիայից ժամանած մի խումբ հայեր: Ազգային բարերար Տիգրան Իզմիրլյանի գլխավորած պատվիրակությանը, որի կազմում էին իր հույրերը, Հակոբ Սարգսյանն իր տիկնոջ հետ և Տ. Աբել քահանա Օղլուգյանը, ուղեկցում էր Պաշտպանության նախարարության ներկայացուցիչը՝ գեներալ Ալիկ Պետրոսյանը:

Հյուրերը նախ այցելեցին Մայր Տաճար և շրջեցին թանգարանում, որտեղ նրանց պատշաճ բացատրություններ տրվեցին պահվող եկեղեցա-ծիսական ցուցանմուշների մասին:

Այնուհետև խումբն առաջնորդվեց դեպի Վեհարան, որտեղ հյուրերին ընդունեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հանդիպման ժամանակ Վեհափառ Հայրապետը ազգանվեր հայորդիների հետ մտերմիկ և բովանդակալից զրույց ունեցավ, որի ընթացքում բացատրեց Մայր Աթոռի առաքելության այս նոր հանգրվանը և պատվիրակության անդամների ուշադրությունը հրավիրեց Հայ Առաքելական Եկեղեցու և Հայաստանի արդի կացության վրա: